8. ՆՈԽՈՒՏԻ ՔԱՋԱԼ

Մի պառավ կնիկ կար, մի թոռ ուներ, էլ զատ չուներ. էդ թոռն էլ Քաչալ էր։ էդ Քաչալին տարավ նոքար տվեց՝ չէլավ, թողաց փախավ. հորթարած տվեց՝ թողաց փախավ. ի՛նչ բանի տվեց՝ թողաց փախավ։

Պառավը ասեց.— Գրողը տանի քե՛ղ, ի՛նչ բանի տալիս ենք՝ փախնում ես, մեր ճարը մո՞նց պըտի ըլլի։ Քեզ պըտի տանեմ մի հարուր մանեթի ծախեմ՝ բերեմ ուտեմ, չարի մեռնեմ. էլ իլաճ չկա։

Քաչալի թեիցը բռնեց տարավ բազար։

Ասեց.— Ծախում եմ էս մուսուպաթ Քաչալին. ինչ բանի տալիս եմ փախնում ա։

Ով էկավ, էրեսին մտիկ արեց, ասեց.— էդ պահելու բան չի։

Սարումը քառասուն դող կար. դողերի մեկն էկել էր հաց առնելու. հացն առավ փռիցը, դրեց ղոլթուղը, էկավ որ պըտի էթար դպա սարը, էդ պառավի կշտին կաղնեց, ասեց.

— Պառա՛վ, ինչ Քաչալ ա՝ պահել ես։

Ասեց.— Էս իմ թոռն ա. դրողի տարածն ի՛նչ բանի տվեցի՝ չմտավ. հըմի բերել եմ, որ ծախեմ։

— Ի՞նչ ա գինը,— ասեց,— ես առնեմ, տանեմ, մեր ձիանը պահա։

Ասեց.— Հարուր մանեթ ա ըստրա գինը։

Հարուր մանեթ տվեց ու առավ։

Պառավն ասեց.— Դրո՛ղ տանի քեզ, դե գնա, ես քու էրեսիցը պրծա։

Էգ գողը Նոխուտի Քաչալին առավ, քցեց ձիու աղաքը, ասեց. — Դե՛, վազի, էթանք սարը ղպա։— Տարավ սարը, իրանց գաղեն։

Հարամիրաշին դուս էկավ զաղիցը, ասեց.

— Խի՞ ետացար, մենք սոված մեռանք, հը՞։

— Հարուր մանեթ տվեցի մի պառավի, էս տղեն առա։

Հարամիրաշին տղին թամաշա արեց, ասեց.

— Ա՜յ հա՜յ, էս ի՛նչ մուսուպաթ Քաչալ ա, կորցրա. ափսոս քու հարուր մանեթը, ըստուց անպատճառ մեզ խաթա կգա, վեր կալ տար կորցրա՛։

Ասեց.— Մենք քառասուն ձիավոր ենք, սաղ երկիրը մեզանից վախում են, էս ի՞նչ ա, որ ըստուց խաթա գա. մի չափալախ տամ, կմեռնի, բերել եմ, որ մեր ձիանոցը եմ տա, ջրի, փեյինը թափի։

Ասեց.— Դու գիտաս։

— Դե՛,— ասեց,— թամաշա արեք, բազրկյան գալի՞ս ա։

Թամաշա արին, ասեցին.— Արևելքի կողմիցը մի շատ ծանտր բազրկյան ա գալի։

— Որ ծանտր ա, դե՛,— ասեց,— բիրադինով նիլեք ձիանը։

Ասեցին.— Քաչա՛լ, ըստի կաց, չանք մենք էթանք, գանք։

Ընդոնք գնացին ձորի միջով, որ պտրտեն, գան ընկնեն ճանփեն, աղաքները կտրեն։ Քաչալն քարերի վրով նիլավ, թամաշա արեց բազրկյաններին, ասեց.— Տենամ, ինչդար բազրկյան կան։

Գնաց ու մտավ բազրկյանի մեջ, ասեց.— Ձեր բազրկյանբաշին որն ա։

Ընդիան մեկն էկավ.— Հը՞, Քաչալ, ի՞նչ ես ասում։

Ասեց.— Հըմի քառասուն ձիավոր ձեզ վրա կտան. բեռները ըստի վեր ածեք, ժաժ մի գաք. մի թուր, մի զալխան տվեք ինձ, մի ուրիշ աբա էլ տվեք, հաքնեմ, որ ինձ չճանաչեն։

Աբեն տվին, մի թուր ու դալխան էլ տվին, կապեց վրին, դալխանն էլ առավ ձեռը, ասեց.

— Էկել եմ ձեզ քոմակ. ընձի հարուր մանեթ փող տվեք, որ ձեզ ընդունց ձեռիցն ազատեմ։

Բաղրկյանը հանեց հարուր մանեթ, ալպեալը համրեց, Քաչալը դրեց ծոցը։

Ասեց.— Էլ չվախենաք, դայիմ կաղնեք։

Էդ քառասուն ձիավորը բաղրկյանների վրա տվեց։ Քաչալը էկավ մեյդան կոիվ. որի ոտը կոտրեց, որի թևը կոտրեց, որի ձիունը տվեց։

Տասնէրկու սահաթ կուվեցին, մի զատ չկարացին տանել։

Հարամիրաշին ասեց.— Կասես էս մեր Նոխուտի Քաչալն բլլի. ողոս սըֆաթին ա։

Հարամիքը ետ դառան դրպա իրանց ղաղեն։

Քաչալն ասեց.— Բաղրկյան[1] բաշի՛, էս քու թուրը, էս քու դալխանը, էս էլ քու աբեն, բառցեք ու գնացեք. ես էթում եմ։

Քաչալն սարիցը վեր էկավ, մտավ ղաղեն։

Մեկ էլ տեհավ, հըրևս հարամիք բիրատի իրարու ետև էկան։

Հարամիրաշին թուրը քաշեց, որ տա սպանի Քաչալին, ասեց.— Քյոփողլի մուսուպաթ Քաչալ, քեզ պես բետ սըֆաթ մի քաչալ էլ ընտի կար, չկարացինք մի զատ բերել։

Սեկել հարամիք ասեցին.— Էս ի՞նչ ա, ձեռիցը ինչ կգա, որ բստրան սպանում ես։

Ասեց.— Բետ սըֆաթ ա. բստրան էրեսը տեսնողի բանը չհաջողվի։

Ձիանոցիցը վեր էկան, թամքերը վեր կալավ Քաչալը, թիմարեց, քրտինքները սրբեց, կապեց, դարման, գարի տվեց։

Հարամիրաշին ասեց.— Տղե՛ք, ո՞րը պըտի եթա մեզ համար հաց բերի։

Հարամու մեկը ասեց.— Բիրատի էլ յարալու ենք. էթանք բազարը կբռնվենք. Քաչալին ղրկենք, էթա հաց բերի։

Հարամիրաշին ասեց.— Քաչալ շա՛ն, արի բստե մի տենամ։

Քաչալը ղշի ղայտա վազեց, աղաքը կաղնեց, ասեց.

---

[1] Ինաղրում եղել է՝ հարամի, հավանաբար տպագրական վրիպակ է. ուղղել ենք (Ս. Կ.)։

— Աղա ջա՛ն, հրամահ։

Ասեց.— Ա՛ռ տասը մանեթ, էս սահաթը հաց կառնես ու կգաս։

Քաչալն մի մեշոք վե կալավ, թռավ, գնաց դրպա բազարը. տասը մանեթի հաց առավ։ Ասեց.— Մե էթամ իմ տատին տեսնամ, մե էրկու հաց էլ տամ, տատս ուտի։

Գնաց, մտավ տուն, ասեց.— Բա՛րև, տատի ջա՛ն։

— Վա՜յ բարով, Քաչալ ջան, դու բարո՛վ էկար։

Ասեց.— Տատի՛, հո՛ սոված չե՞ս։

Ասեց.— Ջէ՛, հարուր մանեթից էրկու մանեթ եմ խարճե։

— Ա՛ռ, տատի, հարուր մանեթ էլ բերել եմ՝ էս էլ դիր ըդրա վրա։

Ասեց.— Գլխիդ ղուրբան Քաչալ ջա՛ն, բանդ խո զոռ չի՞. էդ որտիա՞ն բերեցիր։

Ասեց.— Դարտ մի աներ, շա՞տ կբերեմ, մերը մեռնի Քաչալին, ընդոնք ի՛նչ են, որ ինձ նեղութուն տան։

Ասեց.— Դե՛, տատի, ետացա, մնա՛ս բարին։

Ասեց.— Տատին քե ղուրբան, գնա՛։

Էրկու էրեսն էլ պաչեց, ճանապարհ գրեց։

Քաղաքից դուս ընկավ. հենց արեը մտավ, մութն ընկավ, ճանփեն կորցրեց, դնաց դպա գերեզմանները։

Մտավ գերեզմանատունը տաս-տասնէրկու ղուպուր դրած էր, մտավ մեջը, ղուպուրի տակը պառկեց։

Գշերվա կեսը անց էր կացել, տեհավ մի մարդ մտավ ներս. մի մարդ, որ ջանավարի պես, ազրայիլի պես, ասպասը վրեն, ամեն բանը թաքմիլ։

Էկավ, մեռելները բաց արեց, թամաշա արեց, ասեց. «Էս մեկին տեր ունենա, կըսաղանա»։

Բիրա՞տի ըդենց վարավուրդ արեց, դուս էկավ, որ էթա։

Քաչալն ասեց.— Էս էլ աղամարդկություն չի. էն զա, թամաշա անի, ես ըստի պառկած մնա՞մ։

Վազեց, ասեց.— Ո՞ւր ես էթում. դու Նոխուտի Քաչալի անուն չե՞ս լսե։

Հասավ բռնեց։

Իրար հեղդեցին, էնդար հեղդեցին, չարի լիսը բացվեց։ Ուղում ա փախչի, Քաչալը չի թողնում։

Անճախ փախավ, պրծավ, Քաշալ մաշիկը խլեց։ Մաշիկը դրեց ծոցն ու հացն էլ վե կալավ, գնաց։ Գնաց, հասավ հարամիքանցը, մտավ գաղեն։

Հարամիրաշին ասեց.— Մուսուպաթ Քաշալ, մեզ սոված կոտորեցիր, էս խի՞ եստացար։

Ասեց.— Աղա՛, ձեր բասն ին անըմ բաղրկյանները, որ գալին ըռնեին ձեզ. տեսա բան չէլավ, էկա։

Ասեց.— Ըսենց թեզ էկար, գշերը որտի՞ իր բա։

Ասեց.— Մնացի դերեզմանատանը։

— Մուսուպաթ Քաշալ, հարուր ձիավոր սիրտ չի անի ընտե մտնի, դու մո՞նց մըաար։ Մի ձի նիլ, առ տաս մանեթ, գնա հաց առ, արի, ըստիան քոչենք էթանք. թեզ պըտի գաս, հա՞։

Քաշալն ձին նիլավ, ղպա քաղաքը կրակի պես ա գալի։ էկավ իրանց դռանը կաղնեց.— Տատի՛, տատի՛,— ձեն տվեց։

Դուս էկավ, ասեց.— Ի՞նչ ա, Քաշալ շա՛ն։

Ասեց.— Տատի՛, տանը կաց, տեղ չէթաս. էս մաշիկը տանեմ, ծախեմ, փողը բերեմ դնեմ տունը, էթամ։

— Վա՜յ, քաշկա թայն էլ բերեիր, ջուխտ ըլլեր, կհադնեի։

Ասեց.— Տատի՛, էս կծախեմ, շուխտ մաշիկ կառնեմ, կգամ։

Գնաց, փոիցը հաց առավ, քցեց ձիու վրա, ասեց.— Յավա՛շ, մաշիկն էլ ծախեմ, նո՛ր էթամ։

Դնաց, մի ջհուտ սառաֆի մոտ կաղնեց։

Ասեց.— Էս մաշիկը չե՞ս առնի։

Ասեց.— Տենա՛մ։

Ասեց.— Ա՛ռ տես։

Ջհուտը թամաշա արեց, մտքումը ասեց. «Կաժենա տասը հազար մանեթ»։

— Քաշալ,— ասեց,— էս մաշիկը քե որդիա՞ն ա։

Ասեց.— Որդիան, որդիան՝ քեզ ինչ. առնո՛ւմ ես՝ փողը տո՛ւր, չես առնում՝ իմ մաշիկը տո՛ւ, էթամ։

Ասեց.— Իմ հոր խազինեն կտրել են. էս մաշիկը միջին էր, ես անջախ իմ նշանեն դթա։

Ասեց.— Սուտ ես ասում, իմ մաշիկը տո՛ւ,— ու հասավ, յախեն բռնեց։

Ջհուտն ու Քաշալը իրար տվին, քաշքըշելով իրար տարան թաքավորի մոտը դանգատ։

Ջհուտն ասեց.— Թաքավո՛ր ապրած, իմ հոր խազինեն կըտքել ին, անշախ նշանեն դթա։

Քաչալն ասեց.— Դրա մաշիկը չի, սո՛ւտ ա ասում։

Թաքավորը մաշիկը առավ, լավ թամաշա արեց, ասեց.— Իմ խազինեն ըսդրա կես զինը չհանի։

Թաքավորն ասեց.— Ջհո՛ւտ, ըստրա թայը կա՞, թե հենց էս ա։

Ջհուտն ասեց.— Թայ չունի, հենց էս մինն ա։

Ասեց.— Քաչա՛լ, դու ինչ ես ասըմ, թայ ունի՞, թե չունի։

Ասեց.— Ունի թայ, կէթամ թայն էլ կբերեմ։

Թաքավորն ասեց.— Թե թայը բերեցիր՝ շհուտն ա սուտ ասում, թե չբերեցիր՝ դու ես սուտ ասում։

Ասեց.— Բերե՛ք, պայման դրեք։

Ջհուտն ասեց.— Ես իմ ապրանքը դրավ կդնեմ ըստի, ինչդար ունիմ։

Ասեց.— Քաչտ՛լ, դու ի՞նչ ես դնում։

Ասեց.— Ընձի զատ չունեմ, քառասուն աղբեր ունեմ, բե՛, բռնա, թե մաշկի թայ բերեցի՝ ըղրա մալը ինձ, թե չբերեցի՝ իմ քառասուն աղբեր քեզ ղուրբան, հեղդա։

Ասեց.— Դե՛, գնա՛, կանչա գան։

Ասեց.— Իմ խոսքով չեն դա, հաղար ձիավոր տուր ինձ, էթամ բերեմ։

Թաքավորը հազար ձիավոր հանեց, տվեց Քաչալին։ Քաչալն ընկավ աղաք. գնաց, մտավ ձորի մեջը։

Հարամիրաշին թամաշա արեց, ասեց.— Ջանը՞մ, էս Քաչալը խի՞ չէկավ,— տեհավ Քաչալը աղաքը զալիս ա, ձիավորներին էլ տուտ ու տակ չկա։

Հենց Հարամիրաշին նեքսև մտավ, ասեց.— Վերե՛ք, Քաչալը մեր տունը քանդեց, էնքան ղոշուն ա բերե մեր վրա. ելեք, ձիանը նիլեք, քու բերած Քաչալը քու գլուխն ուտի։

Ձիավորը էկան հասան, զաղի դուռը բռնեցին. մեկն էլ չկարացին զաղիցը դուս գային։

Ձիավորների մենծը ասեց.— Ձեզ ուրիշ բան չկա, թաքավորը կանչում ա։

Հարամիրաշին ասեց.— Էս էլավ քու արած բանը, Քաչա՛լ։

Քաչալը մաշիկը ծոցից հանեց, ասեց.—Աղա՛, խի՞ ես դարա-

անում. էս մաշիկի տեղ ձեզ գրավ եմ դնում, թե գնացի, ըսդրա թայը դեթա բերեցի՝ կպրծնեք, թե չգթա՝ ձեզ պըտի հեզդեն, էլ ի՞նչ կա. խի եք դարտ անում ըդրա համար։

Հարամիրաշին բռնողին ասեց.— Քու գլուխն ուտի քու բերածը, Քաչա՛լն էն տեղը քցեց՝ որ մեզ պրծնում չկա։

Քաչալն ասեց.— Աղա ջա՛ն, գնացեք, էթանք, ըոկի մի՛ մտածեք։

— Քաչա՛լ,— ասեց,— տեղը չի՛, պրծար, մեր ջանն էլ գնաց։

Քաչալն ընկավ աղաք, բերեց թաքավորի կըտին կաղնացրեց, ասեց.

— Թաքավո՛ր ապրած կենա, էս իմ աղբրտանքը։

Թաքավորն ասեց.— Վճիռն գիտաք ի՞նչ ա, թե Քաչալը մաշկի թայը բերեց՝ ջհուտի ապրանքը կառնեմ, կտամ ձեզ, թե որ չի բերեց՝ ձեր քառասունին էլ պըտի հեղդեմ։— Էդ քառասունի ոտներն բխով գրեցին, քցեցին դութսախխանեն։

Քաչալն ընկավ ճանփա, գնաց դուզ գերեզմանատունը։ Գընաց, պառկավ ղուպուրների մեջը։

Տասն օր պառկավ, մարդ-մադաթ չէկավ։

Ցերեկը մեռելը բերում քցում ու էթում ին. էդ Քաչալին հարցնում ին։— Ա՛յ քու տունը չքանդվի մուսուլաթ Քաչալ, ի՞նչ ա, գչեբ-ցերեկ բանդ ես էլե ըստե։

Քաչալի իլաճը կտրվավ, էկավ էլի քաղաքը։

Ասեց.— Էթամ ուրիշ քաղաք, մաշիկի թայը ըստե չէլավ։

Գնաց, ասեց.— Էն մաշկի տեղ գնացի, մաշիկ չկար ընտե. մնաք բարո՛վ, ես էթում եմ մաշիկը բերելու։

Հարամիրաշին ասեց.— Քաչալ ջա՛ն, էն քառասուն ձին էլ քեզ, քառասուն ձեռք ասպապն էլ քեզ, թաքիլան ըստիեն մեզ ազատա։

Ասեց.— Ի՞նչ եք դարտ անում, տաս օր ա անց կացե, եռեսուն օր հալա ժամանակ ունեք։

Քաչալը վեր կացավ ու գնաց ուրիշ քաղաք։

Ասեց.— Էթամ ըստիան գերեզմանները ման գամ։

Գնաց գերեզմանները. գչերը ման էկավ դես, ման էկավ դեն, էկավ, մի քարի տակ պառկավ։

Ցեհավ էն մաշկի տիրոջ պես մի մարդ էկավ ըստե, մի գե-

բեզմանաքար շուռ տվեց, ֆողը հետ տվեց, ղուպուրը հանեց. ղուպուրի բերանը բաց արեց, մի ճիպոտ կար ձեռին՝ մի ճիպոտ տվեց մեռելին. մեռելը սաղացավ, էն մեռելի հետ նստեցին, քեֆ արին։ Մի ճիպոտ էլ տվեց, էլի մեռավ։ Ֆողը տվեց վրեն, քարը քցեց վրեն, որ էթար։

Քաչալը վե կացավ։— Հա՛յ քու մերը մեռնի, Նոխուտի Քաչալի անուն չես լսե,— ասեց,— հասավ բռնեց. իրար քոլոլեցին, իրար շարդեցին։ Հըմի մարդը ուզում ա փախնի, Քաչալը չի թողում ձեռաց։ Քաչալը ձեռ ա քցում ոտաց, տենում ա մաշիկ չկա ոտին։ Ձեռը քցեց, էն ճիպոտը բռնեց. էրկու իրեք սահաթ քաշեցին՝ էն դեն էր քաշում, էն՝ դենը։ Լիսը բացվեց. էդ մարդ ճիպոտը թողաց Քաչալի ձեռը, անճախ փախավ։

Լիսը բացվավ, էկավ քաղաքի մեջը, տեհավ բիրատի էդ քաղաքի մեծավորները թևերը սև են կապե։

Ասեց.— Էս խի՞ են սև կապե։

Ասեցին.— Էս թաքավորի տղեն իրեք օր ա մեռել ա։

Ասեց.— Ես թաքավորի տղին կսաղացնեմ, իմ ուզածը կտա՞։

Ասեցին.— Ինչ ուզես կտա։

Խաբար տարան թաքավորին, ասեցին.— Մի Քաչալ մարդ ա էկե, ասում ա. «Թաքավորի տղին կսաղացնեմ»։

Թաքավորն ասեց.— Հա՞ գիտի, ո՞րտի կըլի, գթեք, բերեք։

Քաչալին գթան, տարան։ Քաչալը գնաց, օխտը անգամ գլուխ տվեց, կաղնեց։

Ասեց.— Ա՛յ տղա, իրեք օր ա իմ տղեն մեռել ա, կարող ես սաղացնես։

Ասեց.— Հրամանքդ, կարող եմ։

Ասեց.— Դե՛, գնա, սաղացրա՛, ինչ որ ուզում ես, պըտի տամ։

Վե կացան, Սինոդի անդամները թաքավորի հետ գնացին դպա գերեզմանները, Քաչալն էլ հետները։

Գնացին, գերեզմանի քարը շուռ տվեցին, ֆողը ետ տվին, ղուպուրը հանեցին. ղափաղը բաց արին, մի ճիպոտ տալու բաշտան, վե կացավ նստեց։

Վե կալան, ուրախություն արեցին, բերեցին պալատը։

Թաքավորն ասեց.— Դե՛, Քաչալ, ուզա, որ պըտի տամ՝ ինչ որ սիրտդ ուզում ա։

Մաշիկը հանեց, դրեց թաքավորի աղաքը.— Ըստրա թայն ճմ ուզում,— ասեց։

Թաքավորը վե կալավ, մաշկին թամաշա արեց, ասեց.— Կաժենա իրեք միլիոն։

Ասեց.— Որդի՛, ըստրա թայը չունեմ։ Տարեք Քաչալի քաշով ոսկի տվեք։

Ասեց.— Թաքավո՛ր ապրած, զատ չեմ ուզում, որ ըստրա թայը չկա, ես էթում եմ, ես մենակ մաշկի թային եմ ման գալի։

Ասեց.— Որդի՛, չկա։

Քաչալն ընկավ ճանապար, գնաց ուրիշ քաղաք։

Թամաշա արեց, էդ քաղաքի մանտրիցը չարի մեծը լաց ին ըլլում, ասեց.— Խի՞ եք լաց ըլլում։

Ասեցին.— Տենո՛ւմ ես էն գյամին, ծովու մեշ բանդ ա էլե, էն բիրատի ցորեն ու ալիր ա, պըտի դուս գա, որ մենք հաց ուտենք, բանդ ա էլե, մենք սոված կոտորվանք. ընդու համար ենք լաց ըլլում։

Ասեց.— Ես որ էթամ, տեսնամ գյամու տակը ինչ կա, որ բեքեմ, ղրաղը հանեմ, իմ ուզածը կտա՞ք։

Ասեցին.— Ի՛նչ ուզես, կտանք։

Վե կացան, լոթկեն դրեցին, տարան գյամու մոտը կաղնեցին։

Մի խանչալ առավ, սկավ շրի տակը, մերը մեռնի Քաչալի [1]. հենց սկավ ու գնաց գյամու տակը։

Թամաշա արեց, մի հատ վիշապ գյամու չորս բոլորը կտրել ա, գլուխը դրել ա պոչի վրա, գյամին ժաժ չի գալի։

Ձեռը քցեց, վիշապի պնչի վրա մի խզմա կա, խզման բռնեց, խանչալով դոշին տվեց, խզմեն պոկ էկավ, մնաց Քաչալի ձեռը, վիշապը փախավ. գյամին երմիշ էլավ։ Մի քիչ տեղ գնաց, Քաչալը դուս էկավ տակիցը, ասեց.

— Մերը մեռնի՞ ձեր, ո՞ւր եք քշում, Քաչալին թողնում ե՞ք, ձեր էյթիպարն է՞ս ա։

Ասեցին.— Վախում ենք էլի գյամին բանդ ըլլի։

Ասեց.— Մի՛ վախենաք, կաղնեցրեք։

---

1 Այս արտահայտությունը բնագրում առնված է փակագծերի մեջ. հավանաբար ասողի ընդմիջարկությունն է (Ս. Կ.)։

Կազնացրին. Քաչալը թռավ, գյամու վրա նստեց։ Քշեցին, էկան ղրաղը։

Սաղ քաղաքը թոփ էլավ, էկան Քաչալին ուրախացրին, վեր կալան, թոցրին, ասեցին.— Կեցցե՞ մեր Քաչալը։

Վե կալան, քանի մարդով տարան թաքավորի մոտը, ասեցին.— Թաքավորը սաղ ըլլի, էս ըլլեր քաղաքը բիրատի սովածկկոտորվեին, դնաց մտավ գյամու տակը, պոկեց, բերեց։

Թաքավորն ասեց.— Ա՛յ Քաչալ, ուղա, որ պրտի տամ։

Մաշիկը ծոցիցը հանեց, դրեց թաքավորի աղաքը, ասեց.

— Ըսարա թայն եմ ուղում։

Թաքավորը վե կալավ, թամաշա արեց, տեհավ՝ էրկու-իրեք միլիոն արժողություն ունի։

Ասեց.— Ըստրա թայը չունեմ, ինչդար ոսկի ուղում ես, փեշքեշ կտամ քեզ, առ տա՛ր։

Ասեց.— Որ չունես, էթամ։

Ասեց թաքավորը.— Թայը չունես, ինչ պտի անես մաշիկը. էդ էլ տուր ընձի, ինչդար փող ուղես, կտամ։

Ասեց.— Ինչ ես ասում, քառասուն աղբերս էս մաշկի խաթեր գրավ եմ ղրե, անկարելի բան ա, թայը որ չդթնեմ, քառասուն աղբորս էլ կհեղդեն։

Վե կացավ, դնաց ձորի միջով. աղաքը ընկավ մի բարակ ճանփա, ու դնաց. դնաց, մութն ընկավ, ընկավ մի ղաղի մեջ. դնաց պուճախում պառկավ։

Քիչ մնաց, տեհավ՝ մի առջ էկավ, պառկավ։

Քիչ մնաց, մի գել էլ էկավ. մի քիչ մնաց մի ասլան էլ էկավ։

Գելն առջին ասեց.— Ինչո՞վ եք պարապում։

Ասեց.— Ես պըտրտում եմ, որտե ձեռս զատ ա ընկնում, ուտում եմ. որ չի ընկնում՝ էթում եմ, քաղաքի ղրաղը մի տեղ կա, պառկում եմ. ջուրը տակով գոգռալով էթում ա, անկանջ եմ անում, էդ ա իմ բանը։

Ասեց.—Բա, գել, դու ինչո՞վ ես պարապում։

Ասեց.— Ես էլ էթում եմ, պտրտում եմ, թաքավորի սուրուի մեջ ճակատը ղաշղա մի ոխշար կա, հ՚աչքս ընդրա վրա ա, ուղում եմ էն ոխշարը բռնեմ, ուտեմ։ Թաքավորի աղջիկը կմեռնի, հիվանդ ա, ժամ պատարագ կանի, ամեն բանը կբոլանա. համա էն ոխշարի գլուխը տան փուռը, էն ախչիկը ուտի՝ կըլլի մորե մեկ, կսաղանա։

Ասեցին.— Ասլա՛ն, բա դու ինչո՞վ ես պարապում։

Ասեց.— Ես էլ ման եմ գալի, մա՞ն. էթում եմ ծովի ղրաղը. Ձեր են գալի իրեք հատ ախչիկ են ըլլում. լեղանում են, հետո խրխեք հագնում են, թոնում են. իմ թամաշեն էլ էդ ա։

Լիսը բացվեց. ըդոնք վե կացան ու գնացին։ Քաչալը դուս էկավ ու գնաց։

Գնաց էդ քաղաքի ղրաղը, տեհավ, է՞, առղը գնացե, էդ քաղաքիցը դուս պառկել ա։ Գնաց, առչին մոտացավ, հալահու արեց, առղը փախավ։ Գնաց, առչի տեղը պառկեց, ունկանչ արեց գետինը։ Տեհավ ջրի գրոգոցը լավ գալիս ա։

Վե կացավ, էկավ էդ քաղաքի մեջը ման էկավ, տեհավ՝ էդ քաղաքը բիրատի ֆորի ջուր են խմում։

Ասեց.— Իմ ուզածը տաք, ես ձեզ համար ջուր կբերեմ։

Թոփ էլան քաղաքի մարդիկը, ասեցին,— Քաչա՛լ, որ ջուր բերես, բերանդ ինչ պտըտա, կտանք։

Ասեց.— Երկու հարուր բահավոր տվեք, էթանք վերև։

Էրկու հարուր բահավոր վե կալավ ու գնաց։

Գնաց, էդ առչի պառկած տեղը քանդեց. ջուրը բացվեց, հինգ ջաղացեն ջուր վե կալավ, բերեց քաղաքը։

Էկան, թոփ էլան Քաչալի գլուխ, ասեցին.

— Դե՛ ուզա, ինչ որ տանք, քեզ արժան ա։

Մաշկի թայը հանեց, դրեց ըստրանց աղաքը, ասեց.

— Ձատ չեմ ուզում, ըստրա թայն եմ ուզում։

Վե կալան, թամաշա արին, մեկը սալղ չտվեց, ասեցին.

— Ըստրա թայը չենք կարա գթնի։

Գնաց, սարը անցկացավ էն դիհը, տեհավ մի սուրու ոխչար արածում ա. գնաց, ոխչարի չոպանի մոտը հասավ, ասեց.

— Էս ի՞նչ ոխչար ա։

Ասեց.— Թաքավորի ոխչարն ա։

Ասեց.— Թաքավորի կուշտ պըտի էթամ, ինչ բանի կըլլի հըմի։

Ասեց.— Տունն ա, մի ախչիկ ունի հիվանդ ա. ընդրա վրա պարապել ա. ինչդար հեքիմ են բերում, չեն կարա լավացնի։

Սուրուի մեջը ման էկան. Քաչալը ասեց.

— Ես էթում եմ թաքավորի մոտը, որ ոխչար էկան ուզելու, էս սիվտակ ոխչարը կտաս, կբերի։

Գնաց թաքավորի պալատի դռանը կաղնեց.

— Ես լավ հեքիմ եմ,— ասեց,— ինչղար դժար հիվանդ ըլլի, ես կլավացնեմ։

Խարար տարան թաքավորին.— Ըսենց մի լավ հեքիմ ա էկե։

Թաքավորն ասեց.— Կանչեք դա նեքսև, տենանք։

Էկան կանչեցին, տարան։ Գլուխ տվեց, կաղնեց։

Ասեց.— Դու ի՞նչ մարդ ես։

Ասեց.— Լավ հեքիմ եմ։

Ասեց.— Իմ աղչիկը էս երկու տարի ա հիվանդ ա. որ լավացրիր ի՛նչ ուզես՝ կտամ։

Վե կալավ, տարավ աղչկա մոտը։

Ասեց.— Ղրկեք չոպանի մոտը, մի հատ սիվտակ, ճակատը դաշդա ոխշար կա, վե կալի բերի։

Ղրկեցին, գնաց էն ոխշարը բերեց։ Բերեց մորթեց, ղլուխը քցեց փուռը. լավ էփեց, ճղճղեց, միսը մի տարելքի մեշ դրեց. վե կալավ, գնաց թաքավորի մոտը, թաքավորն ասեց.

— Վե կա՛լ, տա՛ր։

Տարավ դրեց աղչկա աղաքը, դեղը ցանեց վրան, զոռով քիշքիշ ուտացրեց, ոխշարի գլուխը սաղ կերավ. էլավ մորե մեկ, կաղնեցավ ընտե։

Ըդտեղ ասեց թաքավորը.— Մալըն մալալա վեր, ղղըն քաշալա, ես էդ աղչիկը կտամ քեզ, դու կըլլես ինձ փեսա, իմ պալատի իրավունքը ամենը կհանձնեմ քեզ։

Ասեց.— Թաքավոր ապրած, շնորհակալ եմ։

Մաշիկը ծոցից հանեց ու ասեց.

— Ըստրա թայն եմ ուզում։

Թաքավորը թամաշա արեց, ասեց.

— Ըստրա թայը ոչ տեսել ենք, ոչ էլ կըլլի։

— Շնորհակալ եմ, իմ ուզածը մաշկի թայն ա, որ չկա՝ ի՞նչ անեմ։

Վե կացավ, գնաց ծովի ղրաղը, տեհավ՝ ասլանը դարի գըլխին պառկել ա։ Ասլանը դրան տեհավ՝ քաշվեց, գնաց։

Գնաց, ասլանի տեղը նստեց. ծովի ղրաղն էր հենց։ Էրկու սահաթ նստեց, թամաշա արեց. տեհավ, իրեք հատ աղունիկ էկան. խրխեքը հանեցին, իրեք հատ աղչիկ էլան, որ չուտե՞ս, չխմե՞ս թամաշա անես ըդրանց.

Քաչալն ասեց.— Մերը մեռնի Քաչալի, ըդրանք չբռնի, չի դինոյանա։ Դարի գլխիցը վազեց, չարի հասավ, ըդոնք խրխեքը հագան ու թռան զնացին։

Քաչալն էկավ, ծովի ղրաղը կաղնեց, ասեց.

— Մերը մեռնի Քաչալի, ըսկի բան իմ ձեռիցս չպրծավ, համա ըստոնք պրծան։ Տեհավ մե բարալիկ մուխ ա գուս դալի ծովու միջիցը. հենց էդ մուխն բռնեց, սըկվեց ջրի տակը։ Գնաց, տեհավ մի լավ օթախ ա, թամաշա արեց՝ հայլիքը չորս դին շարած, դիվանիքը դրած, տեհավ ստոլների վրա մի բլութ փլավ, մի աղունիկ էփած, դրած ա ըստեղ, տեհավ ընտեղ էլ իրեք ստոլ էր, իրեքի վրա էլ կար։

Գնաց մի ստոլի վրա կաղնեց, մի կտոր աղունիկից կտրեց կերավ, փլավն էլ հետը. գնաց էն մեկիցն էլ կերավ. դնաց էն մի ստոլիցն էլ կերավ։ Մի թաս էլ գինի խմեց։

Ման էկավ, տեհավ իրեք շուխտ, մի թայ. հը՛, իրա մաշիկիցը։ Մինը վե կալավ, դրեց ծոցը. էն մեկելներուն ձեռ չտվեց։

Հըմի ման ա գալիս՝ գա. որտե էթում ա՝ շուր ա, շշկլեց, մնաց միջին. իլաճը կտրվավ, գնաց, մի պուճախ պառկեց։

Մեկ էլ էն տեհավ, իրեք հատ աղունիկ ֆոռալով էկան օթախի մեշտեղը վեր էկան. խրխեքը հանեցին, իրեք հատ ախչիկ դառան. աշխարքումը ըդենց բան չկա։

Ամենքը մի հատ ստոլի վրա նստեցին, ասեցին.

— Վաղուց ա իրար չէինք տեհե. մի՞ ուտենք, քեֆ անենք։

Մեծ ախչիկն ասեց.— Յավաշ, բան ասեմ. իմ ուտիլ-խմիլը հարամվեց. ես ֆել ի արե, էթում ի գերեզմանատունը մեռելներին թամաշա ի անում. մեկ օր էլ գնացի, թամաշա արի էլի. ուզեցա դուս գայի, էթայի, մուսուպաթ քաչալ պատահեց։ Էնդա՞ր իրար առանք, իրար հեղդեցինք, որ չար լիսը բացվեց. անճախ մաշիկս ըդրա ձեռը մնաց, ես փախա պրծա, ինձ հարամ ձեռ ա դիպե, հալբաթ իմ փլավիցն էլ կուտեն, իմ աղունիկիցս էլ։

Էն մեկը ասեց.— Ա՛յ քիր, յավաշ, իմն էլ ասեմ. սեր արեցի. թաքավորի տղին մեռցրի, տարան թաղեցին. գշերը կէթայի վեկացնեի, սերի վարոցով կտայի, կսաղացնեի. չարի լիս հետը քեֆ կանեի, էլի կտայի՝ կմեռներ, կթողայի կէթայի։ Մի գշեր էլ վե կտցրեցի թաքավորի տղին, քեֆ արեցինք. էլի մեռցրի, ուզում ի էթայի. մի մուսուպաթ քաչալ էկավ, ասեց. «Քու մերը մեռնի ո՞ւր ես էթում», հասավ ինձ, չարի լիս էնդա՞ր իրար հեղդեցինք, անճախ

9—2573

ձեռիցս ճիպոտը խլեց, թողացի փախա։ Ինձ հարամ ձեռ ա դիպե, հալբաթ իմ փլավից էլ կուտեն, իմ աղունիկից էլ։

Էն մի քիրն էլ ասեց.— Ա՛ քիրեր, իմ վրա էլ ա հարամվե, յավաշ, իմն էլ ասեմ. սեր ի արե, մի հատ վիշապ ի դառե ես, թաքավորի քաղաքի դյամու չորս բոլորը կտրել ի, ծովու մեջտեղ բանդ արել։ Քաչալի մեկն էկավ, ձեռ քցեց, ընչիս իդմեն բռնեց, դոշիս տվեց. խղմես պոկ էկավ, մնաց ձեռին. ես անճախ փախա. ինձ հարամ ձեռ ա դիպե, հալբաթ իմ փլավիցն էլ կուտեն, իմ աղունիկիցն էլ։

Ասեցին.— Էդ անողը ըստի պատահի, իրան մուրադը կկատարենք։

Մի քիրն ասեց.— Հնար չկա, օձը իրա պորտովը, ղուշը իրա ղանատովը չի կարա դա ըստե, էն մո՞նց կարա դա։

Մի քիրն էլ ասեց.— Մարդ չի կարա դա, բա էս փլավից, աղունիկից ո՞վ ա կերե։

Ասեցին.— Ուտողը ղոշախ ա, թո դա, ըստե կաղնի։

Քաչալն դուս էկավ, ասեց.— Մերը մեռնի Քաչալի, Քաչալն ա կերե,— վե կացավ, կաղնեց։

Ասեցին։— Ուտիլը հավատացինք, մեր նշանները բեր տենանք։

Ասեց.— Նշաններդ ի՞նչ ա։

Ասեցին.— Մի հատ մաշիկ ա, մի հատ ճիպոտ ա, մի պնչի խզմա ա։

Քաչալը բերեց, իրեք հատն էլ դրեց մեջտեղ։

Ախչկերքը հավատացին. վե կալան ղրան, աղբրի մեջը լեղացրին. որ լեղացրին, ղլխին մաղ էկավ, սիրունացավ, էլավ հրեղեն։

Ախչկերքը բերեցին մեջտեղ նստեցրեցին, ասեցին.

— Դու մերն ես, մենք քունն ենք։— Իրեք օր քեֆ արեցին։

— Ախչկե՛րք,— ասեց Քաչալը,— քառասուն աղբեր գրավ եմ ղրե, քառասուն օր թամամել ա, պըտի հեղդեն. էդ մաշկի թայը պըտի տանեմ։

Նո՛ր ախչկերքը ըդրան ծովիցը հանեցին՝ խրխեքը հագան, էլան աղունիկ, Քաչալին դրին թևերի վրա ու թռան։ Բերեցին, իրա տատի տանը վե դրին։

Ասեց.— Տատի՛, ի՞նչ կա, ի՞նչ ես լսում։

Ասեց.— Գալիս, ինձ ասում են. «Քու թոռը քառասուն դուքսախ ա բռնե, էս էրկու օրը պըտի հեղդեն»։

Վե կացավ, գնաց թաքավորի մոտը. թաքավորին օխտը անգամ գլուխ տվեց, վրա ութին կաղնեց։

— Հա՛, որդի, մաշիկը բերե՞լ ես։

Ասեց.— Հրաման քե, բերել եմ, մերը մեռնի՞ Քաչալի, էթա ու չբերի՞։

Թաքավորն ասեց.— Դե՛, հանա, տենամ։

Քաչալը դաստախունը մեջքիցը հետ արեց, ասեց.

— Թաքավորը սաղ ըլլի, մի ջուխտ քու կնկան փեշքաշ, մի ջուխտ էլ հարսիդ փեշքաշ, մի ջուխտ էլ քու ախչկան, էս էլ մաշիկը, էս էլ ըդրա թայը։ Թաքավորը թամաշա արեց, ասեց.

— Ամենքը իրեք միլիոն ածի, Քաչալը ինը միլիոն բախշեց թաքավորին։

Մարդ ուրկեց, ջհտին կանչեցին։ Ջհուտն էկավ, կաղնեց։

Մաշկի մի թայը դրեց ստոլի տակը, մի թայը ստոլի վրա։

— Ջհո՛ւտ,— ասեց,— էս քու մաշիկն ա, թայը չբերի, վե կալ քու մաշիկը, դնա։

Ասեց.— Ախր պայման ենք արե, էն քառասուն մարդը պըտի հեղդվի։

Ասեց.— Որ մաշկի թայը բերե՞ր։

— Որ բերեր, համ ինձ պըտի հեղդեիր, համ իմ մալը պըտի տայիր ըդրան։

Ասեց.— Վճիռն ըտե՞նց ա։

Ասեց.— Ըտենց ա։

Թաքավորը մաշիկի թայը հանեց, գրեց մաշիկի կողքը։

Ջհուտը, որ տեհավ, ձենը կտրեց քիպ, էլ չկարաց խոսա։

Թաքավորը հրամայեց՝ ջհտին հեղդեցին, տուն տեղ հանձնեցին Քաչալին։ Գնացին էն քառասուն հարամուն հանեցին, բերեցին թաքավորի մոտը կաղնացրին։ Քառասուն հարամուն էլ էդ պալատի մեջը պաշտոն տվեց, Քաչալին էլ կարգեց ամենի գլխավոր։

Քաչալին ասեց.— Արի՛, քե պսակեմ, իմ ախչիկն էլ ուզես՝ տամ։

Ասեց.— Ինձ ունեմ իրեք հատ նշանած։

Թաքավորը հրամայեց, իրեքն ըդրա վրա պսակեցին, ինքն էլ էլավ քավոր։ Պալատի ամեն իրավունքը տվեց Քաչալին։

Քաչալն մի ջուխտ մաշիկը տարավ, հագցրեց, բերեց։

Ընդոնք հասան իրանց մուրազին, դուք էլ ձեր։

Ջհուտն էլ իր ղազապին. նըհախ մարդու տեղն էդ ա։